



Թի 13

ՄԱՐՏ 7. 2019

ԽԵԼԱՑԻ ԱՔԼՈՐՆ ՈՒ ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՈՒԷՍԸ

Ի՞ՆՉ Է ՄԻՋԻՆՔԸ

Մեծ Պահքի կեսը կամ 24-րդ օրը կը կոչուի Միջինք: Միջինքի առթիւ եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ առաւօտեան արեւագալի արարողութիւն իսկ երեկոյեան՝ եկեցոյ:

Միջինքը հաւանաբար հաստատուած է յիշեցնելու համար, թէ Մեծ Պահքը հասած է իր կեսին:

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժամանակին գոյութիւն ունեցած են Միջինքի յատուկ սովորութիւններ, որոնցմէ ցարդ մնացած է «Միջինքի կարկանդակ»ը:

Միջինքի ժողովրդային սովորութիւնները կ'ամփոփուին բաղարջ պատրաստելու, բախտ փորձելու, լիճք պատրաստելու եւ բացօթեայ պտոյտի մէջ:

Մեծ Պահքի 23-րդ օրը եկեղեցւոյ մէջ կը շինուեր լիճք, կոնքի «տաշտ»ի մը մէջ կը լեցնէին ջուր ու ձեթ եւ եղեգէ խաչի մէջ պատրոյգը կը վառէին անոր մէջ, մինչեւ լուսաբաց. առաւօտեան լիճքի ջուրը կը բաժնէին եւ կը խառնէին բաղարջի խմորին հետ: Այդ բաղարջը կը կոչուեր միջունք, միջնաբաղջ, կլոճ:

Բախտ փորձելու համար բաղարջին մէջ կը դրուեր ուլունք կամ դրամ: Տան երեցը Բաղարջը կը բաժնէր տան բոլոր անդամներուն: Ուլունքը կամ դրամը որո՞ւ որ բաժին իյնար, տարուան առատութիւնը անոր պահուած կ'ըլլար: Իսկ եթէ ուլունքը կամ դրամը դանակին բերանը գար, այն ժամանակ բախտը ամբողջ տան վրայ կը տարածուեր, հողը առատ բերք կու տար:

Գիւղի մը մէջ խելացի աքլոր մը կ'ապրէր, որ ամէն առաւօտ կը կանչէր ու կ'արթնցնէր բոլոր գիւղացիները:

Օր մը, երբ աքլորը ծառի մը վրայ թռած կը հանգստանար, անօթի աղուէրը կը մօտենայ ծառին եւ վեր նայելով կը տեսնէ զայն:

Աղուէրը կ'որոշէ ուտել աքլորը, ուստի անուշ ձայնով մը կ'ըսէ.

- Բարեւ, սիրելի աքլոր եղբայր, երկինքէն քեզի լուր կը բերեմ: Նոր օրէնք մը սահմանուած է մեզի համար: Այսօրուընէ սկսեալ բոլոր թռչուններն ու կենդանիները բարեկամ պիտի ըլլան եւ միասին խաղաղութեամբ ու համերաշխութեամբ պիտի ապրին:

Աքլորը կը զարմանայ ու կը հարցնէ.

- Իսկապէ՞ս, ըսածդ ճի՞շդ է:

Աղուէրը կը պատասխանէ.

- Անշուշտ ճիշդ է, եթէ կը փափաքիս փորձէ՛: Ինչո՞ւ վար չես իջնէր:

Այս խօսքին վրայ խելացի աքլորը կը սկսի մտածել եւ կ'ըսէ.

- Վայրկեան մը կրնա՞ս սպասել: Քանի մը ընկերներ հասնելու վրայ եմ:

«Ասոր ընկերներն ալ իրեն պէս աքլորներ ըլլալու են, աւելի լաւ, մէկի տեղ, քանի մը որս կ'ունենամ», - կը մըթմըթայ աղուէրը ու կ'ըսէ.

- Սիրո՞ւմ, կը սպասեմ, աքլոր՝ եղբայր:

Քիչ անց բարձր հաշոցներ կը լսուին: Աքլորը կ'ըսէ աղուէրին.

- Եկան, աղուէս աղբար, ընկերներս եկան:

Որսի շուներուն հաշոցները լսելով, աղուէրը սարսափահար կը փախչի:

Խելացի աքլորը ետեւէն կը կանչէ.

- Այդ ո՞ւր կ'երթաս, աղուէս աղբար, չէ՞ որ միասին պիտի ապրինք հաշտ ու խաղաղ:

Ու ան կը շարունակէ ուրախ-զուարթ իր կու-կու-լի-կուն կանչել:

Այս պատմութիւնը ցոյց կու տայ, որ իմաստութեամբ ու ճարպիկութեամբ կրնանք վտանգներու առաջը առնել, եւ սուտը քողագերծել:



ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒԹԱՆ ԿԱՂՏԱՆ-ՏԻՐՄԻՔԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՅՑԻ ՔԵՇՈՒՄԵՆ

ԱՆՅԱԲԱՏԱԼԻ, ԲԱՅՑ ԻՐԱԿ



* Թայլանտի մեջ գոյութիւն ունին կապիկներ, որոնք իրենց ձագերուն կը սորվեցունեն ակռանին մաքրել:

* Հոյամողեզի կարգ մը հաւկիթներ կը կշռեն մինչեւ 4.5 քիլօ:

* Շաքարեղէնի անգլիական ընկերութիւն մը շինած է տուրմի հըսկայական տուփ մը՝ լեցուած 220052 անհատական տուրմի կտորներով:

* Գոյութիւն ունի արծիւի տեսակ մը, որ կրնայ լողալ:





* Ճափոնի մեջ գոյութիւն ունի *ռամեն նուտըլ (ինտոմի)* ճափոնական ճաշին յատուկ թանգարան մը:

* Թեւատները տարեկան 5000 քմ. կը լողան:

* Իր կեանքին ընթացքին, շանածուկ մը կրնայ ունենալ եւ կորսընցնել մինչեւ 30 հազար ակռայ:

* Կարգ մը արուեստագետներ ծամոն կը գործածեն արուեստի գործեր ստեղծելու համար:

* Պարզ մատիտով մը կրնաս գրել մօտաւորապէս 45 հազար բառ:



Տեսէ՛ք ինչ դիւրին է կրիայ եւ ձուկ գծելը, ապա ներկելը: Փորձեցէ՛ք:


ՀՐԱՏ ԵՒ ԼՈՒՍՆԹԱԳ

Հրատն ալ Փայլածուի եւ Արուսեակի նման խտամարմին եւ երկրանման մոլորակ մըն է: Ան երկրէն աւելի փոքր է: Լուսնթագը, սակայն, Արեգակնային դրութեան ամենամեծ մոլորակն է: Ան երկու անգամ աւելի մեծ է, քան միւս բոլորը միասին:

Հրատ

Հրատը երկրէն ետք մեծութեամբ չորրորդ մոլորակն է Արեգակնային դրութեան: Իր տրամագիծն է 6.794 քմ.: Արեւէն 228 միլիոն քմ. հեռաւորութեան վրայ՝ 687 օր կը տեւէ անոր շրջանը ընելու համար: Ինքն իր վրայ կը դառնայ 24 ժամէն եւ 37 վայրկեանէն: Իր մակերեսը ժայռոտ եւ անապատային է: Հրատը շրջապատուած է բնածխային կազի բարակ մթնոլորտով մը: Ունի ջուր՝ սառած ձեւի տակ, ծովեր, մարած հսկայ հրաբուխներ, խորունկ ձորեր եւ երկու լուսիններ (Ֆոպոս եւ Տէյմոս):

Հրատը կոչուած է «Կարմիր մոլորակ» ընդարձակ գօտիներ ծածկող իր կարմրորակ մետաղեայ փոշիին պատճառով: Գետնին ջերմաստիճանն է միջին հաշուով -23 աստիճան սելսիուս:



Լուսնթագ

142.700 քմ. չափող իր տրամագիծով՝ Լուսնթագը Արեգակնային դրութեան ամենամեծ մոլորակն է: Արեւէն 778 միլիոն քմ. հեռաւորութեան վրայ՝ ան գրեթէ 12 տարիներու պէտք ունի մէկ անգամ անոր շրջանը ամբողջացնելու համար, մինչ ինքն իր վրայ կը դառնայ 9.8 ժամուան մէջ:

Ունի 16 արբանեակներ, որոնց գլխաւորները կը կոչուին Իօ, Եւրոպա, Կանինետ եւ Գալլիստօ: Մակերեսը ծածկուած է կազային ամպով մը: Զգողական ուժը իր մակերեսին վրայ երկրին կրկնապատիկն է: Այսինքն՝ մարդ մը հոն պիտի կշռէր իր երկրային կշիռքին կրկինը:

Իր մթնոլորտի արտաքին խաւը շատ պաղ է (-24 աստիճան սելսիուս), մինչ ցած խաւերուն ջերմաստիճանները կրնան մինչեւ 27 աստիճան սելսիուս հասնիլ:



ԱՌԱՍՊԵԼԻ ԱՇԽԱՐՀԵՆ
ՌԱՅՏԵՆ ԱՄՊՐՈՊԻ
 ՃԱՓՈՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԸ

Անոր անունը կազմուած է «Ռայ»-է, որ ճափոներէն կը նշանակէ որոտ, եւ «տեն»-է, որ կը նշանակէ կայծակ: Չայն կ'անուանեն նաեւ Ռայժին, «Ժին», այսինքն՝ աստուած:

Լաւ նայինք Ռայտենի կերպարին, մենք անմիջապէս կը նշմարենք անոր շուրջ դարձող պզտիկ թմբուկները: Այս ձեւով է, որ ճանչցուած է Ռայտենը: Երբ ան իր թմբուկներուն կը զարնէ, որոտումին ձայները կ'արձագանգեն եւ կայծակները կը փայլատակեն:


Ռայտենը յաճախ կը յայտնուի իր երկուորեակ եղբոր՝ Ֆուժինի հետ, որ հոզի աստուածն է, սակայն միաժամանակ՝ Ռայտենի ամենէն ռիսերիմ թշնամին է: Անկարելի է զանոնք շփոթել, Ֆուժին ունի կարմիր մազեր եւ մարմինը ծածկուած է ընձառիծի մորթով:

Ռայտենի կ'ընկերակցի նաեւ փոքրիկ անասուն մը՝ Ռայժու, որ կրնայ տարբեր կերպարանքներ ստանալ՝ թռչող կրակէ գնդակ մը, կատու, կապիկ:

Գիտե՞ր, թե...

1274 թուականին մոնկոլական բանակը կ'ուզէր գրաւել ճափոնը, սակայն ան ջաջողեցաւ ահաւոր մրրիկի մը պատճառով: Ըստ առասպելին, Ռայտենն է, որ յառաջացուցած է այդ մրրիկը, որուն տրուած է *քամիքազ* անունը ճափոներէնով՝ աստուածային հով:

Յետագային այն անունը տրուեցաւ ճափոնցի այն օդաչուներուն, որոնք իրենց օդանաւերով կ'երթային մեռնելու: Համաշխարհային Բ. պատերազմին ընթացքին:



ԱՉԳ. ԲԱՐԵՆ ԵՓՓԷ
ՃԵՄԱՐԱՆԻ ԶԱԳՈՒԿՆԵՐՍ
ԿԸ ԳՐԵՆ ՈՒ ԿԸ ԳԾԵՆ

ԲԱՐԻ ԵԿԱՐ ՍԻՐՈՒՆ ԳԱՐՈՒՆ

Տարուան ընթացքին մենք չորս եղանակներ կը վայելենք իւրաքանչիւրը ունի իր առանձնայատկութիւնը:

Գարունը մեծ ազդեցութիւն ունի մեր կեանքին եւ բնութեան վրայ: Գարնան գալուստը կ'աւետեն ձնծաղիկը, կակաչը եւ ուրիշ ծաղիկներ, թռչուններուն ծըլվլոցն ու ծառերուն կանաչիլը: Կակաչներն ալ այնպէս կը ծաղկին ձիւնին մէջէն, կարծեք ճերմակ պարապութեան մէջ վառ գոյներով կը ներկեն դաշտերը: Այս բոլորը կը շերմացնեն մեր տրամադրութիւնը եւ կախարդական շունչ մը կու տան բնութեան:

Գարունը մեզի կը սորվեցնէ, որ տխրութիւններէն ետք միշտ կու գան կանաչ եւ պայծառ օրեր:

Լալա Օրուլեան
 Է. կարգ

Ազգ. Բարեն Եփփէ Ճեմարան

ԿԱՆԱԶԱԶԱՐԴ ԳԱՐՈՒՆ

Գարնան բնութիւնը կը գեղեցկանայ ու տերեւաթափ ծառերը իրենց կանաչ զգեստները կը հագնին:

Գարունը տրամադրութիւնս կը փոխէ, որովհետեւ ամառնային արձակուրդը կը մօտենայ եւ պայծառ արեւը կը շերմացնէ մարմինս ու հոգիս:

Իմ նախասիրած եղանակս ամառն է, որովհետեւ տարեդարձս ամրան կը զուգահիփի եւ պտոյտի առիթներ յաճախ կ'ունենանք:

Պետիկ Փայասեան
 Է. կարգ

Ազգ. Բարեն Եփփէ Ճեմարան



Միւսա Վերտանեան
 Է. կարգ
 Ազգ. Բարեն Եփփէ Ճեմարան



Մեղեղի Թահմիզեան
 Է. կարգ
 Ազգ. Բարեն Եփփէ Ճեմարան